



ԸՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱԾՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

15. Փիլիպպոս առաքյալ

Առաջին կանչված առաքյալներեն մեկը: Երբ Հիսուս մկրտութենեն և փորձութենեն նետո Գալիլիա վերադառնալու վրա էր «կրգունք Փիլիպպոսը և կըսե անոր. «Ետևեն եկուր»: Փիլիպպոս ալ Բեթսայիդացի էր, Պետրոսի քաղաքացի (Հովհ. Ա 43–44): Հավանաբար ինք ալ Հովհաննես Մկրտչի աշակերտներեն էր նախապես և ապա հետևեցավ Հիսուսի:

Քանի հիշված է Փիլիպպոս Հովհաննու Ավետարանին մեջ ինչ-ինչ միջադեպերու կապակցությամբ, առհասարակ Անդրեասի հետ միասնաբար:

Օրինակ հացերու հրաշքի առթիվ Հիսուսնախ Փիլիպպոսի կիարցնեն, թե ուրկե պետք էր հաց ճարել այս հնկա քազմության համար: «Այս հարցումը ըրավ Հիսուս, փորձելու համար զայն բայց ինք որոշած էր իր ընելիքը» կըսե Ավետարանիշը փակագծի մեջ: Փիլիպպոս կպատասխանեն. «Երկու

հարյուր դահնեկանի—ավելի քան քսան սթերլին—ինց անգամ պիտի չքավե այս քազմության» (Հովհ. Զ 5–7): Ապա հիշված է կարգ մը հեթանոսներու զՀիսուս տեսնելու փափաքին առնչությամբ, որոնք կմոտենան նախ Փիլիպպոսին, հավանաբար քաջալերվելով անոր զուտ հունական անունեն, որ կնշանակե «ձիասեր», կամ անոր հունարեն գիտնալին: Փիլիպպոս և Անդրեաս (նշանակալից է, որ այս անունն ալ հունական է) կներկայացնեն զանոնք Հիսուսին: Վերջին ընթրիքի ընթացքին, երբ Հիսուս վերջին խոսքերը կըներ աշակերտներուն, հաճախ կընդմիջվեր աշակերտներուն կողմէ հարցումներով: Ասոնց կարգին է նաև Փիլիպպոս: Հիսուս երբ կըսե. «Եթե զիս ճանչցաք, ապա Հայրս ալ ճանչցած եղաք. ուստի այլս կճանչնաք զայն, քանի որ տեսաք զայն». Փիլիպպոս կընդմիջէ. «Տեր, ցուց տուր մեզի Հայրը, և ավելին չենք ուզեր». Հիսուս կպատասխանե. «Այս չափ ժամանակ ձեզի հետ եմ. և չի ճանցցա՞ր դեռ զիս Փիլիպպոս. ով որ զիս տեսավ՝ Հայրը տեսած եղավ. և դուն ինչպէ՞ն կրնաս ըսել. ցուց տուր մեզի Հայրը...» (Հովհ. ԺԲ 7–10):

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № Ն է—Ը-ից:

Ավանդությունը կըսէ որ քարոզած է Փոքր Սահմ մեջ և նահատակված խաչելու բյանը Հիերեպոլիս քաղաքի մեջ:

Կոռնախմբուի իր աշքածան ընկերոց Անդրեասի նետ, Խաչի իններորդ կիրակի- ին հաջորդող շաբաթ օրը:

Հովհաննես. 14: Լատինը՝ միս. 1:

16. Թովմաս առաքյալ

Առաքելության կանչված ըլլալու պարագաները անհայտ են իրեն և ասկէ նետ զայիք մնացալ հինգ առաքյալներուն, քա- ցի վերջիննեն:

Ծանոթ է իր թերահավաստորժամբ: Երբ մոտ ընկեր առաքյալները ըսին, որ հա- բուցալ Տերը տեսած են, Թովմաս պնդեց: որ մինչև ինըն ալ իր աշքերով շտամի զայն և իր ձեռքը շմիկ անոր խոցված կո- ղին, չի հավատար: Ու արդարն հաջորդ շաբաթ երբ կրկին հավաքված էին առաքյալները վերահանամ մեջ, երևալ Հիսուս առներին, և ապա խոսք ողջեղով Թով- մասին բավ. «Ենք մատներդ և դիր այս- տեղ, և տես ձեռքերս: Ենք ձեռք և մինչ կողին մեջ, ու մի ըլլար անհավատ, այլ հավատացալով»: Այն ատեն Թովմաս ծովով եկալ ու գոչեց. «Տեր իմ և Սատված իմ»: Հիսուս եպրակցուց. «Դուն տեսար և հա- վատացիր. երանի անոնց, որոնք շտամած պիտի հավատան» (Հովհ. ի 24—29): Սա- կայն հակառակ իր այս երևութական թե- րահավաստորժան, որ ավելի իրապաշտո- թուն մըն է քան անհավաստորժուն, առա- բին և քաշ առաքյալ մըն է Թովմաս:

Երբ Հիսուսի բարեկամ Ղազարոս մե- ռայի, Ան կգտնվեր Անդրեորդանան, երբ ինացալ մահական լորր Հիսուս որոշեց եր- թառ և հարուցանել զայն: Մական առաքյալներ վարահումի մատնեցան, որովհետև քանի մը օրեր առաջ երեաներ թիշ էր մնա- ցան որ քարերծեին Հիսուսը երրուսդեմ մեջ:

Այն ատեն Թովմաս առաջ անցավ և ը- սավ. «Ենիք մենք ալ միասին երթանք վարդապետին նետ, ու եթէ պետք ըլլա մեռնիլ մեռնինք Անոր նետ» (Հովհ. ԺՄ. 16):

Թովմաս ծանոթ է հատկապես Հովհան- նու Ավետարանին մեջ՝ իրեւ «երկվորյալ»: Եվ ավանդությունը իր երկվորյակ եղբայրը կնկատ Թադեոսը, կամ որիշ աշակերտ մը:

Վերջին ընթրիքին Հիսուսի խոսքը ընդ- միջողներեն մեկն ալ ինըն է հարցումով ո՞ս: Երբ Հիսուս կըսէ. «Ուր երթալու գիտեր. համբան ալ գիտեր», ասիւս չի համոզեր Թովմասը որ կհարցնե:

—Տեր, չենք գիտեր թէ որ կերթաս ինչ- պես ճամբան պիտի կրնանք գիտնալ: Հի- ուսու այս հարցումին իրեւ պատասխան՝ իր ամենեն հշանալոր խորեքեն մեկը բավկ.

—Ես եմ ճամբապարհը, ճշմարտորժունը և կրաքը... (Հովհ. ԺՄ. 4—6):

Ավանդությունը Թովմասը կրկեն այն ա- տենան ծանոթ աշխարհի հեռավորագույն երկիրները Պարթևաստան և մինչև Հընդ- կառատան, որ արդարն առաքելական դա- րերէ ի վեր փոքր քրիստոնեական կելեղեցի մը գոյություն ունեցած է, և որոնք կնախա- տան թէ իրենց ճամբանայրերը դարձի եւրած են Թովմաս առաքյալի քարոզությամբ, ո- րուն համար ալ իրենք զիրենք կերչէն «Ս. Թովմասի քրիստոնեականը»: Առաքյալի գե- րեզմանն ալ մինչև օրս կցոցվի այսուղ Մատրաս քաղաքի մոտ: Նահատակված է եւստահար սպանմամբ: Կտոնեն Թովմասը Հակոբոս Ալիքիս և Շմաֆրն Նախանձա- նոյզ առաքյալներու նետ, Վերափոխման Գ կիր.ի համորդ շր. օրը: Հովհը՝ նոկ. Յ. Լատինը՝ դեկտ. 21 և նու. 3:

17. Թադեոս առաքյալ

Հայոց առաջին լուսավորիչը և ամենեն շատ անուն ունեցող առաքյալը:

Կուկասու Ավետարանի (Զ. 16) և Գործը Սուպերկոցի (Ա. 13) մեջ ծանոթ է որպես Հովհան Հակոբյան: Հովհաննեսի մեջ ևս կր- հիշվի որպես «Հովհան, ոչ՝ Խոկրիփտացի» (ԺՄ. 22), որ Վերջին Կտուկի խոսակցու- թյան ընթացքին ընդմիջողներեն է հետևյալ հարցումով. «Տեր, ի՞նչ կհշանակէ բաեր, որ զրեք մեզի պիտի հայտնեն, և ոչ՝ աշ- խարիմի»: Հիսուս անուղղակի կերպով կպա- տահանեն, որ ինը պիտի հայտնիի զինք սիրութներու մեջ. ընդհակառակը պիտի չերեխ երեք սեր չունեցողներու մեջ: Եսկ Մատթեոս ավետարանից զայն կկոչէ «Ակ- բեռն որ ամսխանեցավ Թադեոս». (Մատթ. Ժ. 3): Մարկոսն է որ պարզապես կկոչէ զայն Թադեոս (Մարկ. Գ. 18): Կաթոլիկ եկեղեցին զայն կնույնացնե Հովհան Տառն- ելուրը նետ, որուն ամուսնով կարճ բույր մըն ալ կա ընդհանրական բույթերու իրեւ վերջինը: Բայց արևելյան եկեղեցներ չեն ընդունիր այս հովհացումը:

Հայտ մեր ազգային ավանդության Թա- դեոս առաքյալ նաև կուգա Եղեսիա, որ ըստ Քրիստոսի խոսումին, կրծշկե և քրիստոնյա կդարձնեն Արգար թագավորը: Եղեսիան արդարն քրիստոնեական հնա- ցուն կեղրուններեն մեկը կըլլա:

Թադեոս իր քարոզությունը առաջ կտա- նի դեպի հյուսիս, կմտնեն Հայոց Սահատ- րուկ թագավորի սահմանները, և դարձի

կրերեն շատ հայեր, որոնք երախայրիքը և հիմքը կկազմեն Հայց. առաքելական եկեղեցին: Կթափանցեն նաև արքունիքը, դարձի կրերեն թագավորին դուստրը, Սանդովիստը, որ կնամատակվի իր հոր ձեռորվէ: Ի վերջո Թաղեն առաքյալն ալ շատ մը հրաշքներ օրծելէ և հազարավոր հոգիներ դարձի բերելեն հետո, նահատակվեցավ սուրով Սրտազ գավաղի մեջ, ներկա պարսկական Ստրատական գավաղի արևմտյան կողմը ուր կցուցվի իր գերեզմանը մինչև այսօր որուն վրա փառավոր եկեղեցի մը կառուցված է: Կտոռնենք զայն երկիցն անս և Բարյոլիմեոսի՝ և ապա՝ և Սանդովիստի հետ. հովանք՝ օգոս. 21: Լատինք՝ հոկտ. 28:

18, 19, 20. Հակոբոս, Շմավոն և Մատաթիա առաքյալներ

Այս երեք առաքյալներուն լոկ անունները կիրշվին Ավետարաններու մեջ և իրենց մասին ոչ մեկ միջադեպ պատմված է:

Հակոբոս ծանոթ է Ալիյան մականունով, որով կտարրելի Զերելյան Հակոբոսն, որոնք զանազանվելու համար Ալիյան կը կոչվի նաև «Կրտսեր Հակոբոս» անունով: Լատին եկեղեցին զայն կնույնացնել Հակոբոս Տյառնելորայ առաքյալի հետ, ինչ որ չեն ընդունիր արևելյան եկեղեցներ, որոնց կարգին նաև մենք: Հակոբոս Ավետարանը տարած կնկատվի Պաղեստինի հարավային ծովեզերքները և Եգիպտոս, որ աս նահատակված կկարծվի:

Շմավոն, կամ հունական ձևով Սիմոն, ծանոթ է Ավետարանի մեջ «կանանցի» մակդիրով որ կնշանակե «նախանձամույզ»: Այս անունով աղանդ մը կամ կուսակցություն մը կար հրեհ մեջ, որոնք միջոցներու մեջ առանց խորություն դնելու կաշխատելի օտար լուծը նետել իրենց վրայն և մեշտեղեն վերցնել որացողները կամ օտարամոլ հրեաները: Նահատակված կը նկատվի Պարսկատանի մեջ: Կտոռնին երկուք միասին թուվմա առաքյալի հետ:

Մատաթիա ընտրվեցավ առաքյալներու կողմէ մատնիչ Հուդայի տեղ, անոր մահեն հետո, իբրև մենք որ Քրիստոսի հետևած է Անոր մկրտութենեն մինչև իր համբարձումը: Եթովպիսի մեջ քարոզած կնկատվի: Իր հիշատակը կնկատարենք Խաչի հինգերորդ շաբթվան երեքշաբթիին: Հույնք կիրշատակեն Հակոբոս Ալիյանը հոկտ. 9-ին. լատինք՝ կնույնացնեն զայն Հակոբոս Տյառնելորը հետ: Հույնք Շմավոնը՝ մյու. 10-ին. լատինք՝ հոկտ. 28-ին: Հույնք Մատաթիան՝ օգոս. 9-ին. լատինք՝ փետր. 24-ին:

21. Պողոս առաքյալ

Վերոհիշյալ առաքյալներու թվումով կապարտվի ցանկը Հիսուսի կողմէ ընտրված «Երկոտասան առաքյալներու»: Սակայն ատնացն դուրս կիրշվին նոր Կտակարանին մեջ նաև ուրիշ գործիչներ, որոնց համար ևս կգործածվի «առաքյալ» մակդիրը: Անոնց մեծագույնն է Պողոս առաքյալ, որ ծանոթ է իբրև «Երեքտասաններորդ առաքյալ»: Այն աստիճան շատ գործածված է այս մակդիրը Պողոսի համար, որ եթե իշտենք «առաքյալ» բառը առանձինն, պահինքն առանց հատուկ անունի, կհասկնաք զայն իբրև ակնարկություն իրեն. ուրեմն Պողոս գերազանց առաքյալն է, և բոլոր դարերու մեծագույն քրիստոնեական քարոզիչը և գործիչը:

Ծնած է Հրեաստանն դուրս, Կիլիկիո Տարտար քաղաքը (Գործ. ԻԲ 3), Փրկչական թվականի առաջին տարիներուն: Իր բարձրագույն կրթությունը առած է Տարտարն իրեական համալսարանին մեջ, իսկ կրոնական լրացուցիչ դաստիարակությունը՝ Երուսաղեմի մեջ «առ ոտո Գամահելի», ինչպես ինք կհաստատէ (Գործ. ԻԲ 3):

Գամահել կերևի Գործք Առաքելոցի մեջ, իբրև լուրջ և ազատամիտ ուարքի մը, որ իր ողջամիտ և իրատես գաղափարներով պատճառ կդառնա առաքյալներու ազատումն, եթե անոնք հրեական Բարձրագույն Սույանի առջև հանված էին դատվելու համար (Գործ. Ե 34—42):

Թեև Հիսուսի գորեթե տարեկից կամ Անկերանի մը տարիներ փոքր, բայց ոչ մեկ նըշան կա որ Պողոս տեսած ըլլա Հիսուս՝ Անոր ողջության ընթացքին: Իր հրեական անունն էր Սավուո, հունացած ձևով՝ Սողոս: Պողոս հոռվմեական անունը ստացավ Կիպրոսի հոռվմեացի կառավարիչ Սերգիոս Պողոսը դարձի բերել հետո (Գործ. ԺԳ 7—9):

Պողոս արհեստով վրանակար էր, ըստ հրեական ստվորության, որ ծնողաց վրա պարտք կդներ անպատճառ օգտակար արհեստ մը ստրվեցնել իրենց զավակներուն: Այս արհեստը առաքյալն շատ օգտակար եղավ, իր ապրուստը ճարելու տեսակետե իր առաքելական գործունեության ընթացքին, առանց որիշներու վրա ծանրանալու (Գործ. ԺԸ 3, Ե 34, Բ Թես. Գ 8):

Պողոս համադրությունն էր իր ժամանակի երեք գլխավոր մշակութներու: Ծնունդով և կրոնքով հրեա է, ուստունքով և լեզվով՝ հոյն. քաղաքացիությամբ հոռվմեացի: Իր ժամանակին մեծագույն պատիկ մը և առանձնաշնորհ մըն էր, օտարներուն համար, հոռվմեացի քաղաքացի ըլլալը, որ

ամեն հայտակի շնորհված առավելություն ուղ չէր. կատանային զայն ի հայաս Հռով-սի մեծ ծառայություն մը մատուցանելով, կամ դրամով, կամ կայսեր մասնավոր շը-նորհին արժանանալով: Պողոսի հայրը կամ նախնիքը հոռվմանեցի բաղարացի եղած կերպին. ինը իբրև այդ ծնած էր (ԽԲ 25—28):

Իր այս գրեթե համամարդկային կազմակորությամբ և՝ Պողոս արդարն կատարելագոյն անձն էր քրիստոնեությունը հայկա-նար ձեռներեցությամբ բարողելու հրեական, հունական և հոռվմանական երեք շը-քանակներու մեջ ալ (Գործ. Թ 15): Պո-ղոս իսկական «ընտիր անոր» մըն էր քրիստոնեությունը տանելու հատկապես հեթանուներուն, և այդ իսկ պատճառով կոչված է նաև «Առարյան Հեթանոսաց» (Գործ. ԽԲ 21, ԽԶ 3, Բ Տիմ. Ա. 11):

Քրիստոնեության հետ շփոմ սկսակ ունենալ Երուսաղեմի մեջ այնպիսի առեւն մը, երբ առաքելական բարողությունը իր առեւնեւն հոռն շրջանին հասած էր. և իբրև արդյունք այս իրողության ստեղծված էր ոչ միայն պատունական հակառակությունն ընդդեմ նոր շարժումնեն, այլ նաև ժողովրդային դեր և դեմ մեծ հետաքրքրություն: Սոլոյն իբրև կորուսի պաշտպանը «Հարքե-նի օրինաց», և իբրև փարիսեցի, տակավ առ տակավ ամենեն աշքի զարենդը եղավ հակառակորդներուն: Ամենայն հայաս-կանությամբ իր առաջին բախումը և բա-նաւելու ոնեցավ Սուտափանոսի հետ:

Կարգ մը հրեաներ, որոնք արտասահմանեն Երուսաղեմ եկած էին, օրինակ «Կոմ-րենացիներ—Լիբրիայեն—Աղեքանիդրացիներ—Եգիպտոսեն— և Կիլիկեցիներ» և Փո-քը Ասիացիներ սկսան վիճիլ Սուտափանոսի հետ, և չեն կրնար դիմադրել այն հաս-տության և հոգին որով կիսումը» (Գործ. Զ 9—10): Այս Կիլիկեցիներուն մեջ էր հա-յասաբար Սոլոյն. որովհետև բացանայու-րեն հիշված է, որ «Սոլոյն կամակից էր Սուտափանոսի սպասնան» (Գործ. Է 59): Ունկնդրած պետք է ըլլա նաև Սուտափանոսի նոյնակայ և երկար ճառը, որ ամ տվակ իրենց Ազգ. Գերագոյն Ժողովին մեջ, և որ նորդեցոց Սուտափանոսի դեմ հակառակության բաժանը և պատճառ եղավ իր բար-կոնման:

Սուտափանոսի մամեն հետո խիստ հայ-ածնք մը շրջայագերծվեցավ քրիստոնեից դեմ Սոլոյն սպաշնորդությամբ. «Սոլոյն վճասներ կհասցներ եկեղեցին, կմուներ սունե տուն, դորս կրաշեր—քրիստոնա ե-ղած—այրեր և կիները ու բանն ենտել կու-տար զանոնք» (Գործ. Ը 3): Քրիստոնեա-ներուն ձայնը ըստ բակալամին ինդդեկն

հետո Երուսաղեմի մեջ, ներկայացավ բա-հանայապետին և ամեկ ընծայական բույր խնդրեց, որպեսզի արտասահմանի մեջ ալ աշխատի առաջը առնելու նոր շարժումի ծավալման, սկսելով Դամակուտեն: Այդ հակառագրական ճամբրության ընթաց-քին է, որ Սոլոյն կատան շնորհաց հար-վածը Քրիստոսի կողմէ տեսիլով մը, որ կիանագի իր դարձին և միլության Դա-մակուտ մեջ, հայանաբար ՅԵ թվականին: Անկե նեռու իր կանքին մնացալ տարինե-րը կրյան ամրոշական նվիրում մը իր հայածած կրոնիք տարածման:

Կիազմակերպէ երեք-չորս առաքեկա-կան արշավանքներ, որոնցմէ ստացինի ընթացքին, Կիպրոսի մեջ, կարձանագրն իր մեծ հաջողություններէն մեկը, նախ կու-րության դատապարտելով Եղինաս մոգը, որ շատերը կմուրեցներ, և ապս հայտա-քի բերելով Կիպրոսի հոռվմեացի փոխկա-ռավարիչը, Սերգիոս Պողոսը, որմէ նեռու կակավի Սոլոյն կոչվել նաև ՊՈՂՈՒ: Հա-յասութիւ տարածման համար իր կատարած ճամբրությունները կուսնին զինքը Փո-քը Ասիր հայավային և արևմտյան բոլոր ընդարձակ համանգները, և ամրող Հո-ւնաստանի մեկ ծարքն մնար: Կիբունն բազմաթիվ տեղական եկեղեցիներ այս հո-յամասերուն վրա:

Այս բարողչական առաքելություններէն երրորդէն հետո՝ Երուսաղեմ վերադարձին՝ տաճարի շրջանակին մեջ հակառակորդ ամբոխ զինքը կշրջապատե և տեղվոյն վրա բարկոնելով վերց պատի տար իր կանքին, եթե մոտիկ զրաւոնցնեն հոդիմա-յեցի զինքորներ չհասնենին և չփրկեն գայն: Տարիեցավ հոռվմեական կատարի-նիշներու կերորն Պատկատինյան Կասրին բաղաբը, որ ազատ բանտարկությամբ մնաց երկու տարիներ, և հոռվմայեցի դա-տափոր պատժի արժանի ոչ մեծ հանցանք գտնելով ողեց արձակել զայն, բայց հրեա-ներ պահանջեցին որ Երուսաղեմ երթա և այսուել կրոն. իշխանության առջև դասմի: Խալիան զիտաւուլ իր գլխուն զալիքը՝ Պո-ղոս ըսավ. «Լայսակ կրողորեան»: Ուստի ըրկեցավ Հոովիս այնուել դասմելու հա-մար: Գործ Առաքելոցը Պողոսի Հոովիս համեմերով իր վերջավորության կրերին ու խորեկով. «Լայսա երկու տարիներ մը-նաց այնուել իր փարձրով, կընդուներ բո-լոր անոնք, որ կուգային իրեն, կրառզեր Աստուծ արքայությունը, և կուտուներ Տեր Հիսուս Քրիստոսի մասին՝ անհապին և ազատ համարձակ» (Գործ. ԽԸ 30—32):

Ինչ որ կիշանակե, թե ազատ բանտար-կությամբ երկու տարի մնաց Հոովիս: Դատը տեսնեցա՞վ թե ոչ հայտնի չէ: Ավանդու-

թյունը կըսէ, որ արդարք առաջին այս դատին ազատ արձակվեցավ Պողոս և շարունակեց Ավետարանի քարոզությունը մինչև Սպահիա և ալլոր. կրկին վերադարձավ Հոռվմ և 67 թվականին Ներոնյան հալածանքներու ատեն ձերքակալվեցավ և սուրով նահատակվեցավ:

Պողոս առաքյալի անունը և քարոզությունը անմահացնողները բացի իր ընդարձակ առաքելական քարոզութենեն՝ առավելաբար իր թուղթերն են, այսինքն տասընչորս համակենք, զորս ուղղած է իր հիմնած եկեղեցիներուն և կարգ մը անձերուն: Այս համակենքը որքան մեծ առաքյալի ներքին ապրումներուն և նկարագրի գիծերուն հետաքրքրական աղբյուրներ են, նույնական ալ քրիստոնեական աստվածաբանության և բարոյական ուսուցումի անընպատճենական են:

Պողոս ամբողջական նվիրումի և անդուլ գործունեության անմրցելի տիպար մը եղավ: Ամբողջ իր կարողությունը և զորությունը ի սպաս դրավ Աստուծ արքայությունը քարոզելու: Եղավ արդարք և իրավամբ «Ծառա Հիսուսի Քրիստոսի», ինչպես կսիրե կոչել ինքզինքը իր համակենքուն սկիզբը: Հաստակորեն ըմբռնած ըլլալով քրիստոնեական կրոնքի մաքոր և վսեմ ոգին, անոր տիեզերական և ոգեղեն բնութը, և Քրիստոսի բերած փրկության բարիքները անձամբ և ամենեն ավելի ինք հաշակած ըլլալով, զայն նկատեց բերված բոլոր մարդոց համար անխտիր—հրեի և հեթանոսի, արոտի և հգի, ծառայի և տիրոշ—ուստի այն համոզումը գոյացուց թե այլևս մերջ գտած է դեռը հրեական ծիսական կրոնին, և անոր տեղը գրաված է Քրիստոսի բերած ոգեղեն կրոնքը, որուն կարելի է հաղորդ դառնալ լոկ հավատքով: Այս բարը—ՀԱՎԱՏՔԸ—հիմնական տեղը կը գրավէ անոր ուսուցման մեջ:

Հրեական ծիսապատության դեմ պայքարած ըլլալուն համար ենթարկվեցավ շարունակական հալածանքի և շարչարանքներու, զորս կթվէ իր թուղթերուն մեջ: Ծուրջ հինգ տարի բանտարկվեցավ Երուսաղեմ, Կեսարիա և Հոռվմ. հինգ անգամ անհակության ենթարկվեցավ (լուրա-

քանչյուր գանակոծություն կրաղկանար 39 օպավագանի հարվածն), երեք անգամ ձաղկվեցավ. մեկ անգամ քարկոծված ու երեք անգամ նավակոծության հանդիպած է. շարունակ կատարած է տաժանելի և նոգենեցուից ճամբորդություններ: Ու կեզրակացնե Առաքյալը այս չարչարանքներու թվումն մասանցը. «Վիշտեր՝ գետերնն, վիշտեր՝ ավազակներնն, վիշտեր՝ ցեղակիցներնն, վիշտեր՝ հեթանուններն, վիշտեր՝ բաղաբներու մեջ, վիշտեր՝ ամայի վայրերու մեջ, վիշտեր՝ ծովու վրա, վիշտեր՝ սոսն եղբայրներն. հաճախ հոգնաբեկ եղած եմ, շատ անգամ անքուն, անորի, ծարավ և մերկ մնացած եմ. ձգենք այն նեղությունները զորս կրած եմ խումաննեն, որ շարունակ վրաս կդիզվեր. ունեցա մշտական նոտակություններ իմ հիմնած եկեղեցիներու մասին. երբ անոնք հիվանդ են, ես ալ հիմվանդանամ. երբ անոնք շիտակ ճանապարհեն շեղին, ես կոտապապիմ ու կզարանամ...» (Բ Կորնթ. ԺԱ 24—29):

Պողոսի կյանքը ոչ միայն մշտական նարտիրոսություն մը, այլ նաև ու առավելաբար իրական դյուցազնություն մըն է, ունարազանց քան Հերակլեսինը, երբ մանավանդ նկատի ունենանք որ այս առավելական դյուցազնը առյուծներու, վիշապներու կամ հսկաներու դեմ կպայքարի—Պողոս կմաքառի մարդկային տափտության, չարության, նախանձի և նախապաշտումի դեմ. ու մանավանդ անտեսնելի ու սատանայական «իշխանություններու և պետություններու դեմ, խավարի աշխարհակալներու դեմ, չարության գերմարդկային ուժերու դեմ» (Եփս. Զ 12): Պողոսի թուղթերը քրիստոնեական գրականության առաջին գործերն են, գրված ըլլալով մինչև իսկ Ավետարաններն առաջ:

Պողոս առաքյալը կմիշտակենք Պետրոսի հետ, Ավագ տոներու ընթացքին, և Ծնունդնեն շուրջ տասը օրեր առաջ:

Հովանք և լատինք՝ Պետրոսի հետ հնա. 29: Դարձը՝ հն. 25: Առանձինն հն. 30: (Ծարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Խաթանուլ, 1977, էջ 162—170)